ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

24 հոկտեմբերի երեքշաբթի 2023
տպագրության ԺԲ տարի

149
(2815)

100 դրամ

քաղաք Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ԿԱՍԿԱԾՆԵՐ՝ ԻՆՉՊԵՍ ԷՐ ՀՖՖ ՆԱԽԱԳԱՀԻ ԲԱՆԿԱՅԻՆ ՔԱՐՏԸ ԳՈՂԱՑՎԵԼ

Ո՞վ է ՀՖՖ մերօրյա նախագահը: Արմեն Մելիքբեկյանը, որը ժամանակին սպորտային լրագրող էր, 2019թ.-ի դեկտեմբերի 23-ին ընտրվեց Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի նախագահ: Այն, որ Մելիքբեկյանը այդքան էլ տեղյակ չէ այն ամենից, ինչով զբաղվում է, դա հարցի ցավալի կողմերից միայն մեկն է. առավել ուշագրավ է այն, որ ՀՖՖ նախկին նախագահ Ռուբեն Հայրապետյանը աղմկահարույց բացահայտումներ էր արել Արմեն Մելիքբեկյանի վերաբերյալ, սակայն դրան ոչ ոք ուշադրություն չէր դարձրել: Մասնավորապես, Հայրապետյանը «Ազատության» հետ զրույցում հայտարարել էր, որ գիտի, թե ով է ՀՖՖ ներկայիս նախագահը. «Մելիքբեկյան Արմենը պատանեկան հավաքականի հետ մեկնել էր Իսպանիա: Ով որ խումբը ղեկավարում է, նրան մենք տալիս ենք քարտ, որի վրա գումար կա: Մելիքբեկյան Արմենը Իսպանիայից եկավ ու հայտարարեց, որ իր քարտը գողացել են, գումարն էլ՝ քաշել (մի քանի հազար եվրո)»: Ասել է թե՝ գողություն: Սրան ի պատասխան՝ Մելիքբեկյանը պարզաբանել էր, որ խոսքը 2008 թվականի միջադեպի մասին է, երբ Բարսելոնայում իրենից գողացել են բանկային քարտը, ապա վստահեցրել է, թե, իբր, իր անձնական միջոցներից վերադարձրել է, եւ որ դա վկայող փաստաթղթեր էլ կան: Բնականաբար, այդպես պետք է ասեր նախկին սպորտային լրագրողն ու ֆեդերացիայի մերօրյա նախագահը, բայց ինչպես ժողովրդական ասացվածքն է ասում, անկրակ ծուխ չի լինի: Հենց այս դեպքից հետո էլ Մելիքբեկյանը ազատվել էր աշխատանքից յուրացումների պատճառով: Հիշեցնենք, որ դեռեւս 2019 թվականի նոյեմբերի 21-ից՝ Արթուր Վանեցյանի հրաժարականից հետո, ֆեդերացիայի նախագահի պաշտոնը թափուր էր մնացել, եւ հավակնում էին այդ պաշտոնին ֆեդերացիայի նախագահի առաջին տեղակալ Արմեն Մելիքբեկյանը, «Լոռի» ակումբի նախագահ Թովմաս Գրիգորյանը եւ «Անի» թիմի նախագահ Խորեն Հովհաննիսյանը: Sputnik Armenia-ն գրեց, որ Հայրապետյանը իրեն մեղավոր է զգում, որ նախկինում աշխատանքի է ընդունել ՀՖՖ փոխնախագահներ Արմեն Մելիքբեկյանին եւ Արմեն Նիկողոսյանին: Ավելին՝ նա ներողություն էր խնդրել մեկնաբան, ՀՖՖ նախկին մամուլի քարտուղար Սուրեն Բաղդասարյանից (որը զգուշացրել էր իրեն այս քայլից) նրա խորհուրդը չլսելու համար: Հիշեցնենք, որ նույն Մելիքբեկյանին երկու անգամ են անվստահություն հայտնել: Մի անգամ էլ դա եղել է 2019թ.-ին, երբ Մելիքբեկյանը ՀՖՖ գլխավոր քարտուղարն էր:



Սեպտեմբերի 27-ին Արցախի նախկին պետնախարար Ռուբեն Վարդանյանին ադրբեջանական կողմը Լաչինի միջանցքի վրա տեղակայված Հակարիի ապօրինի անցակետում ձերբակալեց, ինչի մասին հայտնեց նրա կինը: Ավելի ուշ Ադրբեջանը հայտնեց, որ Վարդանյանը կալանավորվեց 4 ամսով: Ադրբեջանի ԱԱԾ-ն նաեւ հայտնեց, որ ԼՂ ՊԲ հրամանատարի նախկին առաջին տեղակալ Դավիթ Մանուկյանը եւս ձերբակալված է, որը, ըստ «Ժողովուրդ» օրաթերթի բացառիկ տեղեկությունների, եղել է Ռուբեն Վարդանյանի մեքենայում, այսինքն՝նրանք ձերբակալվել են նույն օրը: Սեպտեմբերի 29-ին ադրբեջանական լրատվամիջոցներում տարածվեց տեղեկություն, որ Արցախի ՊԲ նախկին հրամանատար Լեւոն Մնացականյանը եւս գերեվարված է: Հոկտեմբերի 4-ից սկսած՝ ադրբեջանական մամուլը սկսեց տարածել լուսանկարներ, տեսանյութեր նաեւ գերեվարված նախագահների՝ Բակո Սահակյանի, Արայիկ Հարությունյանի, Արկադի Ղուկասյանի մասնակցությամբ: Սա դեռ միայն պաշտոնյաների մակարդակում տեղի ունեցած գերեվարություններն են, եւ միայն վերջին օրերին: Հարյուրավոր, եթե ոչ հազարավոր խաղաղ բնակիչներ, զինծառայողներ, պատերազմի մասնակիցներ, անչափահասներ այսօր Ադրբեջանի գերեվարության մեջ են: Իսկ ի՞նչ քայլեր է ձեռնարկում այս կապակցությամբ հայկական արդեն միակ պետությունը՝ Հայաստանը: Այն մարմինները, որոնք որ, ենթադրվում է, պետք է գործունեություն ծավալեին այս ուղղությամբ, բազմաբովանդակ լռում են: «Ժողովուրդ» օրաթերթը հարցումներ է ուղարկել պետության ղեկավար մարմիններին՝հասկանալու, թե ինչ քայլեր է անում ՀՀ-ն 2020թ. պատերազմի ընթացքում եւ հետո գերեվարվածներին, 2023թ. գերեվարված Արցախի Հանրապետության 3 նախագահներին եւ ռազմաքաղաքական նախկին ու ներկա ղեկավարներին հայրենիք վերադարձնելու ուղղությամբ: Նաեւ խնդրել ենք կոնկրետ նշել՝ վերջին քայլը Հայաստանի կողմից որն է եղել այդ ուղղությամբ, երբ եւ ինչ պատասխան է տվել Ադրբեջանը դրան: Նախագահն իր աշխատակազմով թեեւ փայլում է հարցումներին պատասխանելու արագությամբ, սակայն նույնը չի կարելի ասել նրա գործունեության հետ կապված: «Արտաքին քաղաքականության բնագավառում Հանրապետության նախագահի լիազորություններն ամրագրված են Սահմանադրությամբ: Ձեր գրության մեջ արծարծված հարցերը վերաբերելի չեն Հանրապետության նախագահի՝Սահմանադրությամբ սահմանված լիազորություններին եւ գործառույթներին»,- տեղեկացնում են նախագահականից: Այս ամենից կարելի է ենթադրել, որ պարոն Խաչատուրյանի լիազորությունների մեջ է մտնում միայն ծնունդներ շնորհավորելն ու դեսպաններին ընդունելը, իսկ թե այդ ընթացքում Հայաստանը կշարունակի արդյոք քարտեզի վրա լինել, կամ լինելու դեպքում էլ մարդ կմնա արդյոք ներսում, թե բոլորը կգերեվարվեն, միեւնույնն է: Կարճ ասած, եկեք տխուր բաներից չխոսենք:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ «Մայր Հայաստան» դաշինքի առաջնորդ Անդրանիկ Թեւանյանը առաջիկայում հայտարարելու է ավագանու անդամի մանդատը վայր դնելու մասին: Մեր տեղեկություններով՝ խմբակցությունը հիմնական կազմով պատրաստվում է գնալ ավագանու աշխատանքներին եւ այնտեղ շարունակել իր գործունեությունը: Ինչպես մեր աղբյուրներն են հայտնում, Թեւանյանը, ի տարբերություն Հայկ Մարությանի, որը հայտարարել է մանդատը վերցնելու մասին, վայր կդնի մանդատը եւ կշարունակի իր գործունեությունը՝ որպես ընդդիմադիր գործիչ, «Մայր Հայաստան» դաշինքի առաջնորդ:

ՀՀ պաշտպանության նախարար Սուրեն Պապիկյանի տեղակալ Կարեն Բրուտյանը պաշտոնը զբաղեցնում է 2021 թվականի օգոստոսի 13-ից: Բրուտյանը մինչ այս՝ 2018 թվականի մայիսից, զբաղեցրել է ֆինանսների նախարարի առաջին տեղակալի պաշտոնը: Մինչ այս էլ նա կառավարությանն առընթեր Պետական եկամուտների կոմիտեի նախագահի առաջին տեղակալն էր: Փոխնախարար Բրուտյանի կարիերան սկսվում է Համաշխարհային բանկի պետական ներքին ֆինանսական հսկողության խորհրդատուից մինչեւ պաշտպանության նախարարի տեղակալ: Բրուտյանը 2016 թվականին, երբ եղել է ՊԵԿ նախագահի տեղակալ, հայտարարագրել է 1 բնակարան բազմաբնակարան շենքում, 1 անհատական բնակելի տուն եւ 1 հողամաս, եւ քանի որ նախկինում հայտարարագրերում չէր երեւում գույքի գնման ժամանակը, տեղանքը եւ գնման եղանակը, այդ պատճառով այլ մանրամասներ չենք ներկայացնում: Այնուամենայնիվ, 2023 թվականին ներկայացված հայտարարագրից հասկանում ենք, որ Բրուտյանի բնակարանը ժառանգություն է, իսկ բնակելի տունը՝նվիրատվություն: Այս անգամ՝ 2023 թվականին, նա եւս մեկ անշարժ գույք ունի, որը ձեռք է բերել 2019 թվականին: 2016 թվականին պաշտոնատար անձի արժեթղթերը եւ ներդրումները կազմել էին 50 հազար դրամ, փոխառությունները կազմել էին 55 հազար եվրո: 2023 թվականին Բրուտյանի հանձնված եւ վերադարձված փոխառությունները բավականաչափ աճել են՝կազմելով 79 մլն 314 հազար դրամ եւ 5 հազար եվրո: Փոխառությունները, այսինքն՝ վարկերը, աճել են, քանի որ աճել են Բրուտյանի եւ՛ կանխիկ դրամական միջոցները, եւ՛ տարեկան եկամուտները: Այսպիսով, ըստ 2016 թվականին ներկայացրած հայտարարագրի՝ փոխնախարարի դրամական միջոցները կազմել էին 25 մլն դրամ, 85 հազար դոլար եւ 58 հազար եվրո: 2023 թվականին դրանք անգերազանցելիորեն աճել են՝դառնալով 50 հազար եվրո, 40 հազար դոլար եւ 55 մլն դրամ, նաեւ բանկային հաշիվները կազմել են 856 հազար դրամ: Բրուտյանի տարեկան եկամուտը այդ տարվա հունվարի մեկից մինչեւ պաշտոնը ստանձնելու օրը կազմել է 5 մլն 749 դրամ: Նույն տեմպով այս տարիների ընթացքում աճել են նաեւ եկամուտները գրեթե 4 անգամ՝դառնալով 19 մլն 283 հազար դրամ: Ստացված վարկերի եւ փոխառությունների մայր գումարի մնացորդը հաշվետու տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 48 մլն 286 հազար դրամ, որից 2-ը բնակելի տան հիփոթեք է, որը կազմում է տարեկան եկամտի կրկնակիից մի փոքր ավելի: Հավելենք նաեւ, որ Բրուտյանը տրանսպորտային միջոց չի հայտարարագրել, սակայն կինը՝Անի Սարգսյանը, հայտարարագրել է 2018 թվականի արտադրության Nissan մակնիշի մեքենա, որը գնել է 2020 թվականին: Կնոջ կանխիկ դրամական միջոցները կազմել են 35 հազար դոլար, 2 մլն դրամ եւ 15 հազար եվրո: Բրուտյանի կինը՝որպես մասնագետ, աշխատում է ամուսնու նախկին աշխատավայրում՝ Պետական եկամուտների կոմիտեում, որտեղից էլ, որպես աշխատանքի վարձատրություն, ստացել է 997 հազար դրամ:

ԶՐՈՒՅՑ

Ո՞Վ Է ՓՈԽՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԹԵԿՆԱԾՈՒՆ

Երեւանի փոխքաղաքապետերից մեկի պաշտոնում, ինչպես արդեն հայտնել ենք, առաջադրվել է ավագանու «Հանրապետություն» խմբակցության անդամ Սարգիս Մադաթյանի թեկնածությունը: Նա 2022թ.-ից Արամ Սարգսյանի «Հանրապետություն» կուսակցության անդամ է հանդիսանում:

Սարգիս Մադաթյանն ԱԺ նախկին պատգամավոր, ՀՀ տրանսպորտի եւ կապի նախարար Էդուարդ Մադաթյանի եղբորորդին է:

«Ժողովուրդ» օրաթերթը այս առիթով զրուցել է Սարգիս Մադաթյանի հետ:

-Պարոն Մադաթյան, ըստ շրջանառվող տեղեկությունների՝ քննարկվում էին Անի Խաչատրյանի եւ Արտակ Ջեյնալյանի թեկնածությունները, ինչպե՞ս ստացվեց, որ Դուք առաջադրվեցիք քաղաքապետի տեղակալի պաշտոնում:

-Դա «Հանրապետություն» կուսակցության քաղխորհրդի որոշումն է եղել: Իմ թեկնածությունն առաջադրվեց, եւ քաղխորհուրդն ընդունեց՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ ես 2009-2014թթ.-ին աշխատել եմ քաղաքապետարանում՝ որպես մասնագետ: Այսինքն՝ հաշվի առնելով իմ մասնագիտական կարողությունները՝ առաջադրվեց իմ թեկնածությունն, ինչի համար շնորհակալ եմ: Անի Խաչատրյանի ու Արտակ Ջեյնալյանի թեկնածության հարցը չի քննարկվել քաղաքական թիմում:

-Պարոն Մադաթյան, փոխքաղաքապետի պաշտոնը քաղաքական պաշտոն է, ուստի ենթադրում է ոչ միայն մասնագիտական հմտություններ, այլեւ քաղաքական փորձ: Հաշվի առնելով, որ Դուք ընդամենը մեկ տարի է, ինչ քաղաքական թիմի անդամ եք, արդյոք Ձեր քաղաքական փորձը բավարա՞ր է այդ պաշտոնը զբաղեցնելու համար:

-Ընտրություններից առաջ մենք նախընտրական ծրագիր էինք ներկայացրել ու մեծ ցանկություն ունենք մեր ծրագրեր իրականացնելու: Սա բարդ ճանապարհ է, որը պետք է անենք քաղաքական թիմով՝ ի շահ Երեւանի: Մեր ծրագիրը ոչ միայն քաղաքական են, այլ նաեւ պարունակում են մասնագիտական գործունեություն: Կարծում եմ՝ կկարողանամ իմ առջեւ դրված քաղաքական խնդիրները լուծել:

-Պարոն Մադաթյան, ձեր քաղաքական ուժին մեղադրում են որպես ընդդիմադիր ներկայանալու, քաղաքացիներից ձայներ ստանալու, հետո դրանցով ՔՊ-ի հետ համագործակցության գնալու համար: Ստացվում է՝ ովքեր ձայն են տվել «Հանրապետության»-ը՝ համարելով ընդդիմադիր ուժ, իրականում ձայն են տվել ՔՊ-ին: Չե՞ք կարծում, որ սրանով դեմ եք գնացել ձեր սկզբունքներին:

-Այս մասով արդեն մեր քաղաքական ուժի ղեկավար Արամ Սարգսյանը եւ քաղաքապետի թեկնածու Արտակ Ջեյնալյանը հայտարարություն արել են, պարզաբանել են, մեր կուսակցության էջում դա կա, իմ կողմից հավելելու բան չունեմ:

Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ

ԱՆՀԱՅՏ Է

ԿՔՆՆԱՐԿԵՆ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻՆ

Երեւանի ավագանին հոկտեմբերի 26-ին արտահերթ նիստ կհրավիրի: Նիստին քննարկվելու է փոխքաղաքապետերի նշանակման հարցը:

«Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ քաղաքապետի առաջին տեղակալի պաշտոնում Տիգրան Ավինյանն առաջարկել է Արմեն Փամբուխչյանի թեկնածությունը: Արմեն Փամբուխչյանն իր քաղաքական գործունեությունը սկսել է ԱԺ-ից. 2018թ.-ին ընտրվել էր պատգամավոր «Իմ քայլը» կուսակցությունների դաշինքի համապետական ընտրական ցուցակով: Վերջինս խորհրդարանից գործուղվել էր գործադիր՝ 2022թ-ից զբաղեցնելով ԱԻ նախարարի պաշտոնը: Այս տարվա հունիսի 30-ից՝ ԱԻՆ-ի լուծարումից հետո, Փամբուխչյանը մնացել էր անգործ: Արմեն Փամբուխչյանը, որը նաեւ ՔՊ վարչության անդամ է, Նիկոլ Փաշինյանի «աչքն ու ականջն» է լինելու քաղաքապետարանում, փոխքաղաքապետի պաշտոնում նրան նշանակելը հենց Փաշինյանի որոշումն է եղել: Փոխքաղաքապետի պաշտոնում առաջադրվել է նաեւ Լեւոն Հովհաննիսյանի թեկնածությունը:

Հովհաննիսյանը 2018թ. սեպտեմբերի 23-ին կայացած Երեւանի ավագանու արտահերթ ընտրությունների արդյունքում «Իմ քայլը» կուսակցությունների դաշինքի համամասնական ցուցակով ընտրվել է Երեւան քաղաքի ավագանու անդամ: 2021-2023թթ.-ին զբաղեցրել է Երեւանի քաղաքապետի առաջին տեղակալի պաշտոնը, իսկ 2023թ.-ի մարտից՝ նախկին քաղաքապետ Հրաչյա Սարգսյանից հետո, նա էր կատարում քաղաքապետի պարտականությունները:

Փոխքաղաքապետի պաշտոնում առաջադրվել է նաեւ Սուրեն Գրիգորյանի թեկնածությունը: Վերջինս, չնայած երիտասարդ տարիքին, հասցրել է տարբեր պաշտոններ զբաղեցնել թե՛ ԱԺ-ում, թե՛ գործադիրում, այժմ՝ նաեւ քաղաքապետարանում: Վերջինս իր քաղաքական գործունեությունը սկսել է խորհրդարանից. 2018 թվականի դեկտեմբերի 9-ին ընտրվել է Ազգային Ժողովի պատգամավոր «Իմ քայլը» կուսակցությունների դաշինքի համապետական ընտրական ցուցակով: 2021 թվականի ապրիլի-դեկտեմբեր ամիսներին զբաղեցրել է Հայաստանի արդարադատության փոխնախարարի պաշտոնը: 2022 թվականի փետրվարի 8-ին Երեւանի ավագանու նիստում նշանակվել է Երեւանի փոխքաղաքապետ: Ի տարբերություն Արմեն Փամբուխչյանի, որը Նիկոլ Փաշինյանի «մարդն է» քաղաքապետարանում, Լեւոն Հովհաննիսյանը եւ Սուրեն Գրիգորյանը Տիգրան Ավինյանի մտերիմներն են: Փոխքաղաքապետի պաշտոնում առաջադրվել է «Հանրապետություն» կուսակցության անդամ Սարգիս Մադաթյանի թեկնածությունը: Վերջինս առանձնապես հարուստ քաղաքական կենսագրություն չունի: Նա 2022թ.-ից Արամ Սարգսյանի «Հանրապետություն» կուսակցության անդամ է հանդիսանում: Սարգիս Մադաթյանն ԱԺ նախկին պատգամավոր, ՀՀ տրանսպորտի եւ կապի նախարար Էդուարդ Մադաթյանի եղբորորդին է: Ըստ «Երեւան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի՝ քաղաքապետի տեղակալներին ներկայացնում է քաղաքապետը, նշանակում կամ ընտրում է Երեւանի ավագանին:

Ք. ՄՈՒՇԵՂՅԱՆ

ՊԵՏՔ Է ՀԱՐՑԱՔՆՆՎԻ

Աշտարակի ՔՊ-ի «սրտի քաղաքապետ» Թովմաս Շահվերդյանին նախաքննական մարմինը որոշել է, որ պետք է հարցաքննի: Ավելին՝ մեզ հասած լուրերի համաձայն՝ իրավապահներին զանգեր են կատարել քաղաքապետին «փրկելու» հարցով: Բացի այդ, կատարված դեպքը փորձում են ջարդել «Աշտարակի ձոր» ռեստորանի սեփականատիրոջ որդու գլխին: ArmLur.am-ը գրել էր, որ հոկտեմբերի 20-ին հայտնի դարձավ, որ Արագածոտնի մարզի «Աշտարակի ձոր» ռեստորանային համալիրից դեպի «Գալուստի ձոր» կոչվող հանգստյան գոտի կրակոցներ են հնչել, ինչի հետեւանքով Աշտարակի քաղաքապետի տեղակալին վիրավորում ստացած տարել էին հիվանդանոց: Ավելի ուշ shamshyan.com-ը գրեց, որ իրավապահները տեղի ունեցած միջադեպի գործով ձերբակալել են Ուշան համայնքի ղեկավար, 28-ամյա Գրիգոր Հարությունյանին, «Ես եւ նա» ՍՊԸ տնօրեն, Ազգային ժողովի նախկին պատգամավոր, Արագածոտնի նախկին մարզպետ Սարգիս Սահակյանի եղբորը՝ 54-ամյա Նաիրի Սահակյանին, Ուշի համայնքի ղեկավար, 45-ամյա Մարտին Մարտիրոսյանին եւ այլոց: Հիմա այն մասին, թե կոնկրետ ինչ է կատարվել: Եվ այսպես, ArmLur.am-ին հասած տեղեկությունների համաձայն՝ «Աշտարակի ձոր» ռեստորանային համալիրի սեփականատերը վերոնշյալ հատվածում՝ հողի վրա, աշխատանքներ է իրականացրել, եւ նշված հասցե է եկել Աշտարակի քաղաքապետ, ՔՊ թիմակից դարձած նախկին ՀՀԿամերձ Թովմաս Շահվերդյանը ու սկսել վիճել նրանց հետ տարածքի հողի մասով, իր առարկությունները ներկայացրել, որից հետո հեռացել է: Նրա հեռանալուց հետո դեպքի վայր են հասել ոստիկանները, քանի որ օպերատիվ տվյալներ են ստացել, որ նշված հասցեում «մարտաֆիլմ կինո» է լինելու: Եւ մինչ ոստիկանները հսկում են տարածքը, դեպքի վայր է գալիս մոտ 40-հոգանուց խումբ, ու սկսում են քարերով, բահերով դաժան ծեծի ենթարկել ռեստորանի տիրոջը: Անգամ ոտիկանների ներկայությունը չի սաստում խմբի անդամներին դադարեցնելու «մարտաֆիլմը»: Այս իրավիճակը տեսնելով՝ ռեստորանի տիրոջ տղան հանում է ավտոմատը ու կրակում, որպեսզի սաստի ներկաներին, եւ կրակոցներից վիրավորվում է Աշտարակի քաղաքապետի տեղակալն ու եւս մեկ անձ: Իրավապահ համակարգում քննությունը շարունակվում է, եւ ենթադրություններ կան, որ միգուցե քաղաքապետ Թովմաս Շահվերդյանն է այս խմբին ուղարկել ռեստորանի տիրոջ դեմ: Ամեն դեպքում, մենք կհետեւենք քննության ընթացքին:

ՍՊԱՌՆԱՑ ԱԴՐԲԵՋԱՆԻՆ

Գերմանիայի Բունդեսթագի պատգամավոր Միխայել Ռոթը հայտարարել է, որ Եվրոպական Միությունը ձախողել է այն հավասարակշիռ քաղաքականությունը, որը վարում էր երիտասարդ ու ժողովրդավարական Հայաստանի եւ հարուստ ու ավտոկրատ Ադրբեջանի նկատմամբ: «Ժողովուրդ» օրաթերթի փոխանցմամբ՝ Գերմանիայի Բունդեսթագի արտաքին հարաբերությունների հանձնաժողովի նախագահն այս մասին ասել է լրագրողների հետ ճեպազրույցում:

«Այն հավասարակշիռ քաղաքականությունը, որը վարում էինք երիտասարդ ու ժողովրդավարական Հայաստանի եւ հարուստ ու ավտոկրատ Ադրբեջանի նկատմամբ, ձախողվել է: Սա նշանակում է, որ մենք պետք է վերաձեւակերպենք մեր քաղաքականությունը, այսինքն՝ ունենանք հստակ դիրքորոշում, այն է՝ ինչպիսի դիրքորոշում ունենք արդյոք այդ երկու երկրների հետ կապված:

Եթե Ադրբեջանը չդադարեցնի իր ագրեսիվ եւ հրահրող քաղաքականությունը, անշուշտ կկիրառվեն պատժամիջոցներ Ադրբեջանի ռեժիմի նկատմամբ, որոնք այժմ մշակման փուլում են: Շարունակելու ենք նույն ինտենսիվությամբ ակտիվորեն աջակցել խաղաղությանը միտված բոլոր բանակցություններին»,- ընդգծեց Ռոթը:

Հարցին, թե որ պայմաններում կկիրառվեն Ադրբեջանի դեմ պատժամիջոցները, օրինակ՝ այն դեպքում, եթե Ադրբեջանը հարձակվի Հայաստանի վրա, Գերմանիայի Բունդեսթագի արտաքին հարաբերությունների հանձնաժողովի նախագահը պատասխանեց՝ ամեն ինչ կանի, որ պատժամիջոցները սեղանին հայտնվեն եւ կիրառվեն:

«Ամեն դեպքում, մենք թույլ չենք տա՝ ԵՄ-ն ինտենսիվացնի էներգետիկ համագործակցությունը Ադրբեջանի հետ: Ավտորիտար պետությունները միայն մի լեզու են հասկանում, եւ այդ պատճառով հարկավոր է շեշտել, թե ինչպիսի հետեւանքներ կունենան նրանց հնարավոր ռազմական գործողությունները, եթե այդպիսի զարգացումներ տեղի ունենան»,- եզրափակեց Ռոթը:

Հավելենք, որ Գերմանիայի Բունդեսթագի արտաքին հարաբերությունների հանձնաժողովի նախագահ Միխայել Ռոթը ժամանել է Հայաստան:

Ինչպես տեղեկացնում է «Ժողովուրդ» օրաթերթը, Միխայել Ռոթը X-ի իր միկրոբլոգում գրել է, որ այցի ընթացքում հանդիպումներ կունենա վարչապետ Նիկոլ Փաշինյանի, Ազգային ժողովի նախագահ Ալեն Սիմոնյանի եւ ԱԺ արտաքին հարաբերությունների մշտական հանձնաժողովի նախագահ Սարգիս Խանդանյանի հետ:

ՊԱՏԱՍԽԱՆ

ՆԱՄԱԿ՝ ԹԱԳՈՒՀԻ ԹՈՎՄԱՍՅԱՆԻՆ

ԱԺ մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի մշտական հանձնաժողովի՝ աղօրինաբար լիազորությունները դադարեցված նախագահ, անկուսակցական պատգամավոր Թագուհի Թովմասյանը սոցցանցի իր էջում գրում է. «Հարավային Կովկասի հետ հարաբերությունների հարցերով պատվիրակության ղեկավար տիկին Մարինա Կալյուրանդը, արձագանքելով Հայաստանին եւ Արցախին սպառնացող անվտանգային մարտահրավերների, Ադրբեջանի վայրագությունների մասին ահազանգող նամակներիս, իր պատասխան նամակում հավաստիացրել է Արցախի Հանրապետության եւ այնտեղից բռնի տեղահանված բնակչության իրավիճակի, ինչպես նաեւ հենց Հայաստանին սպառնացող վտանգների նկատմամբ Եվրախորհրդարանի ամբողջական ուշադրության մասին: Նա, մասնավորապես, նշել է.

«Հարգելի՛ տիկին Թովմասյան,

Եվրոպական խորհրդարանի նախագահ տիկին Ռոբերտա Մեցոլան խնդրել է ինձ՝ որպես Հարավային Կովկասի հետ հարաբերությունների հարցերով պատվիրակության նախագահ, պատասխանել Ձեր նամակներին:

Ցանկանում եմ Ձեզ վստահեցնել, որ Եվրախորհրդարանի ամբողջական ուշադրությունը կենտրոնացած է 2023 թ. սեպտեմբերի 19-ի ադրբեջանական հարձակման համատեքստում Լեռնային Ղարաբաղի եւ իր տեղահանված բնակչության համար ստեղծված ողբերգական հետեւանքների, ինչպես նաեւ Հայաստանին սպառնացող վտանգների վրա:

Եվրախորհրդարանի առաջատար պատգամավորների կողմից սեպտեմբերի 19-ին հրապարակված հայտարարության մեջ, ինչպես նաեւ խորհրդարանի՝ 2023 թ. հոկտեմբերի 5-ի բանաձեւում մենք խստորեն դատապարտում ենք նախապես ծրագրված եւ չհիմնավորված ռազմական հարձակումը եւ կոչ ենք անում նպատակային պատժամիջոցներ սահմանել Ադրբեջանի կառավարության պատասխանատու անձանց նկատմամբ: Ինչպես գիտեք, մեր նախորդ բանաձեւերում եւ հայտարարություններում մենք արդեն միաձայն դատապարտել եւ պահանջել ենք պատժամիջոցներ Լաչինի միջանցքի անմարդկային շրջափակման համար, որն իրականացվել է 2020 թ. հրադադարի հայտարարության եւ Արդարադատության միջազգային դատարանի հրամանների բացահայտ խախտմամբ:

Թույլ տվե՛ք իմ խորին ցավակցությունը հայտնել այս ռազմական հարձակման, դրա հետեւանքների, այդ թվում՝ Ստեփանակերտի մոտ վառելիքի պահեստի ողբերգական պայթյունի հետեւանքով Ղարաբաղի հայերի զոհերի համար: Ես նաեւ իմ խորին զորակցությունն եմ հայտնում այն մարդկանց, որոնք ստիպված են եղել լքել իրենց տները: Մենք կշարունակենք նպաստել փախստականների վերադարձի իրավունքի իրացմանը եւ նրանց անվտանգության ու բարեկեցության համար Ադրբեջանի պատասխանատվությանը՝ միջազգային երաշխիքներով: Սա պետք է ներառի միջազգային ներկայությունը տեղում՝ ապահովելու թափանցիկություն եւ վստահություն, ինչպես նաեւ այլ առաջնահերթ խնդիրների, ինչպիսին է մշակութային ժառանգության պահպանումը:

Մենք քաջատեղյակ ենք Հայաստանի Հանրապետությանը սպառնացող Ադրբեջանի ագրեսիվ հռետորաբանության եւ ռազմական կուտակումների մասին: Գրանադայում Եվրոպական քաղաքական համայնքի հանդիպման շրջանակներում ԵՄ-ի աջակցությամբ կայանալիք հանդիպմանը մասնակցելու Ադրբեջանի նախագահի մերժումն այս առումով ցավալի է, քանի որ դա եւս մեկ անգամ ցույց է տալիս կայուն խաղաղության ձգտման՝ Բաքվի հանձնառության բացակայությունը: Սա է նաեւ պատճառը, որ մենք կոչ ենք անում համապարփակ վերանայել ԵՄ-ի հարաբերություններն Ադրբեջանի հետ: Թեեւ մենք վստահում ենք եւ կոչ ենք անում վերսկսել խաղաղ բանակցությունները, Բաքվի հետ «բիզնեսը, ինչպես միշտ» բանաձեւն ակնհայտորեն այլեւս անընդունելի է:

Այս դժվարին ժամանակահատվածում, երբ Ձեր երկիրը բախվում է մի շարք արտաքին սպառնալիքների, Եվրախորհրդարանը վերահաստատում է իր անսասան աջակցությունը Հայաստանի ինքնիշխանությանը, ժողովրդավարությանը եւ տարածքային ամբողջականությանը: Այն ձգտում է Հայաստանին տրամադրվող ԵՄ աջակցության էական ավելացմանը՝ մարդասիրական օգնության անմիջական կարիքներից դուրս: Մենք կարծում ենք, որ դա որոշակի պայմաններում պետք է ներառի նաեւ Եվրոպական խաղաղության հիմնադրամի աջակցությունը:

Ի վերջո, թույլ տվե՛ք նշել, որ ես ողջունում եմ վերջերս Հայաստանի կողմից Միջազգային քրեական դատարանի Հռոմի ստատուտի վավերացումը: Սա կարեւոր քայլ է՝ հօգուտ միջազգային արդարադատության, որը հստակ ուղերձ է հղում պոտենցիալ ագրեսորներին եւ Հայաստանն ավելի է մոտեցնում Եվրամիությանը»,- ի պատասխան իմ նամակների՝ գրել է Հարավային Կովկասի հետ հարաբերությունների հարցերով պատվիրակության ղեկավարը»:

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ՄԱՆԴԱՏԸ ՎԱՅՐ ԴՐԵՑ

ԱԺ «Հայաստան» խմբակցության պատգամավոր Արմեն Չարչյանը վայր է դնում մանդատը: Նա արդեն համապատասխան դիմումը ներկայացրել է ԱԺ: «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում Չարչյանը հաստատեց այս տեղեկությունը, սակայն չցանկացավ խոսել պատճառների մասին:

«Առաջիկայում հայտարարություն կտարածեմ, կխոսեմ. հիմա ժամանակ չունեմ»,- ասաց նա:

ՆՇԱՆԱԿՎԵՑ ՀՅՈՒՊԱՏՈՍ

ՀՀ արտաքին գործերի նախարարի հրամանով՝ Կարեն Իսրայելյանը նշանակվել է Լոս Անջելեսում Հայաստանի Հանրապետության գլխավոր հյուպատոս: Այդ մասին «Ժողովուրդ» օրաթերթին հայտնում են ԱԳՆ-ից:

ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆ

Գազայում տեղի ունեցած մարտերում պետք է մարդասիրական դադար լինի. առաջնահերթությունը տարածաշրջանին օգնություն հասցնելն է. այսպիսի հայտարարություն է արել ԵՄ արտաքին քաղաքականության ծառայության ղեկավար Ժոզեպ Բորելը Լյուքսեմբուրգում ԵՄ ԱԳ նախարարների հանդիպմանը ժամանելուն պես: Հեռարձակումն իրականացնում է ԵՄ խորհրդի մամուլի ծառայությունը:

«Գազայում պետք է հումանիտար դադար լինի: Հումանիտար դադարը կքննարկվի այսօր: Անհրաժեշտ է, որ մարդասիրական օգնությունը հասցվի տարածաշրջան եւ բաշխվի: «Համաս»-ի հարվածները Իսրայելին պետք է դադարեցվեն, պատանդները պետք է ազատ արձակվեն: Սրանք դեէսկալացիայի առաջին քայլերն են», - ասել է Բորելը:

«Առաջին օրը 20 բեռնատարի թույլատրվեց մուտք գործել Եգիպտոսից, բայց նորմալ ժամանակներում՝ առանց պատերազմի, օրական 100 բեռնատար էր հասնում Գազա, ուստի պարզ է, որ 20-ը քիչ է: Կարեւոր է ավելի շատ օգնություն տրամադրելը, վառելիք է պահանջվում էլեկտրակայանների եւ աղազերծման համակարգերի գործարկման համար, առանց որոնց նույնիսկ հիվանդանոցները չեն կարող գործել»,- հավելեց Բորելը:

ՆԵՐԿԱՅԱՑԱՎ

ԴԱՆԱԿԱՀԱՐԵԼՈՒ ԿԱՍԿԱԾԱՆՔՈՎ ՁԵՐԲԱԿԱԼՎԵՑ

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ փիչ առաջ Նոր Հաճնի քաղաքապետ Գագիկ Մաթեւոսյանի որդին՝ Հայկ Մաթեւոսյանը, ներկայացել է իրավապահներին եւ ձերբակալվել է:

Հիշեցնենք, որ shamshyan.com-ը գրել էր, որ Նոր Հաճնում 2 քաղաքացու դանակահարելու կասկածանքով որոնվում է Նոր Հաճն քաղաքի բնակիչ, 25-ամյա Հայկ Մաթեւոսյանը:

Հ. Մաթեւոսյանը Նոր Հաճնի քաղաքապետ Գագիկ Մաթեւսյանի որդին է: Ինչպես ավելի վաղ հայտնել էր ֆոտոլրագրողը, հոկտեմբերի 19-ին դանակահարություններ էին տեղի ունեցել Կոտայքի մարզում: Ժամը 02:30-ի սահմաններում «Աբովյան» բժշկական կենտրոնից ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանության Նաիրիի բաժին ահազանգ էր ստացվել, որ «կրծքավանդակի ձախ կեսի ծակած, թափանցող վերք, հեմոպլեւմոթարկս» ախտորոշմամբ իրենց մոտ է տեղափոխվել մի քաղաքացի:

Հիվանդանոց էր մեկնել ոստիկանության Նաիրիի բաժնի օպերատիվ խումբը՝ օրվա պատասխանատու հերթապահի գլխավորությամբ: Տեղում բժիշկները ոստիկաններին հայտնել էին, որ վիրավորն ի վիճակի չէ կատարվածի մասին բացատրություն տալու: Մինչ բժիշկները պայքարում էին վիրավորի կյանքի համար, ոստիկանության Նաիրիի բաժնի քրեական հետախուզության եւ համայնքային ոստիկանության բաժանմունքի ծառայողները պարզել են, որ վիրավորը Նոր Հաճն քաղաքի բնակիչ, 31-ամյա Գեւորգ Բ.-ն է: Կարճ ժամանակ անց նույն հիվանդանոցից ահազանգ էր ստացվել ոստիկանության Նաիրիի բաժին, որ «որովայնի առաջային պատի կտրած-ծակած բութ վերք» ախտորոշմամբ իրենց մոտ է տեղափոխվել մի քաղաքացի: Ոստիկանները վերադարձել են հիվանդանոց, սակայն բժիշկները հայտնել են, որ վիրավորը ի վիճակի չէ կատարվածի մասին բացատրություն տալու:

Ոստիկանները պարզել են, որ վիրավորը Նոր Հաճն քաղաքի բնակիչ, 32-ամյա Նարեկ Ա.-ն է: Կարճ ժամանակ անց ոստիկանության Նաիրիի բաժնի ծառայողները, ձեռնարկելով օպերատիվ միջոցառումներ, պարզել էին, որ Նոր Հաճն քաղաքի Ազատամարտիկների փողոցում նշված անձանց եւ Նոր Հաճն քաղաքի բնակիչ, 25-ամյա Հայկ Մ.-ի միջեւ վիճաբանություն էր տեղի ունեցել, որի ժամանակ էլ Հայկ Մ.-ն իր մոտ եղած դանակով մի քանի հարվածներ էր հասցրել Գեւորգ Բ.-ին եւ Նարեկ Ա.-ին: Գեւորգ Բ.-ն «Աբովյան» բժշկական կենտրոնից տեղափոխվել է Երեւանի «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կենտրոն:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՈՒՇԱԳՐԱՎ

ԿՐԻՄԻՆԱԼ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ՝ ՄԱՐԶԵՐՈՒՄ

Հոկտեմբերի 19-ին Նոր Հաճնում 31 եւ 32-ամյա երիտասարդները ստացել են դանակի մի քանի հարվածներ ու տեղափոխվել հիվանդանոց. կասկածյալը Նոր Հաճնի քաղաքապետի որդին է՝ 25-ամյա Հայկ Մաթեւոսյանը: Նա ձերբակալված է:

Հոկտեմբերի 20-ին կրակոցներ են հնչել «Աշտարակի ձոր» ռեստորանային համալիրում. կրակոցների հետեւանքով հրազենային վնասվածքով հիվանդանոց են տեղափոխել Աշտարակի քաղաքապետի տեղակալին, որը Աշտարակի քաղաքապետի հետ քավոր-սանիկական հարաբերությունների մեջ է: Ըստ լուրերի՝ քաղաքապետ, ՔՊ-ի թիմակից Թովմաս Շահվերդյանը եւս եղել է դեպքի վայրում, նրան եւս հարվածներ են հասցրել, իսկ թեման հողի հարցի շուրջ առաջացած տհաճ խոսակցությունն էր:

Սա միակ աղմկահարույց կրակոցներն ու միջադեպերը չեն, որոնք արձանագրվել են մարզերում քաղաքական իշխանության ներկայացուցիչների կամ նրանց հարազատների մասնակցությամբ:

2023թ. հունիսի 7-ին ՀՀ ոստիկանության Թալինի բաժնում հաղորդում էր ստացվել այն մասին, որ նույն օրը՝ ժամը 19.00-ի սահմաններում՝ Արագածավան բնակավայրում գտնվող ավտոմեքենաների լվացման կետի մոտ ծագած վիճաբանության ընթացքում, բնակավայրի բնակիչ, ՔՊ-ական Սուրեն Թորոսյանը գազաբալոնով գազ է փչել նույն բնակավայրի բնակիչ, 24-ամյա Ա.Ս.-ի դեմքին, փայտով հարվածներ հասցրել վերջինիս մարմնի տարբեր մասերին՝ պատճառելով մարմնական վնասվածք: Վերջինս ստացել է ամբուլատոր բուժօգնություն: Գործը դատարանում է:

2022 թվականին Ապարան քաղաքում կրակոցներ հնչեցին, որը ունեցավ ողբերգական հետեւանքներ: 2022թ. հունիսի 18-ին՝ ժամը 22:30-ի սահմաններում, Երեւան քաղաքի 32-ամյա բնակիչը եղբոր հետ Ապարան քաղաքում ավտոմեքենան վարելու ընթացքում ձայնային ազդանշան թեմայի շուրջ վիճեցին այլ երիտասարդների հետ, որի հետեւանքով հնչեցին կրակոցներ, ու 3 անձ սպանվեց: Քրեական գործով շոշափվեց ՔՊ-ական պատգամավոր Մաթեւոս Ասատրյանի եղբոր՝ Գրգո Ասատրյանի անունը, որին, սակայն, «ջրից չոր դուրս հանեցին»:

Ք. ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԿԱՐԵՎՈՐ

ՓՆՏՐՈՒՄ ԵՆ ԾԱՌԱՅԵԼ ՉՑԱՆԿԱՑՈՂՆԵՐԻՆ

«Ժողովուրդ» օրաթերթին հայտնի դարձավ, որ Էդգար Մխիթարյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ 27.03.2019թ. կցագրվել է ՀՀ ՊՆ Շիրակի զինկոմիսարիատում, ապա հասնելով զորակոչային տարիքի, պարտավոր լինելով ներկայանալ Գյումրիի զինկոմիսարիատ՝ չի ներկայացել եւ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հիմքերի բացակայության պայմաններում խուսափել է զինվորական ծառայության 2021 թվականի ձմեռային զորակոչից: «Ժողովուրդ» օրաթերթը պարբերաբար հրապարակում է, որ իրավապահները մեկը մյուսի հետեւից մեղադրանքներ են առաջադրում բանակում ծառայել չցանկացողներին:

Տիգրան Սամվելի Սահակյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, ունենալով ավագ հետախույզի զինվորական հատուկ մասնագիտություն, հանդիսանալով պահեստազորում հաշվառված զինապարտ ՀՀ քաղաքացի, ՀՀ կառավարության՝27.09.2020 թվականի թիվ 1586-Ն որոշմամբ հայտարարված ռազմական դրության եւ զորահավաքային զորակոչի ժամանակ՝ 44-օրյա պատերազմի ընթացքում՝ 26.10.2020 թվականին, հրաժարվել է իր անվամբ ՀՀ ՊՆ զորակոչային եւ զորահավաքային համալրման ծառայության Լոռու մարզի տարածքային ստորաբաժանման կողմից կազմված եւ իրեն հասցեագրված ծանուցագիրը ստանալուց՝դրանով իսկ խուսափելով զորահավաքային զորակոչից:

Կարեն Ավետիսյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ 2018թ. ապրիլի 12-ին կցագրվել է ՀՀ ՊՆ Շիրակի զինկոմիսարիատում, ապա հասնելով զորակոչային տարիքի, պարտավոր լինելով ներկայանալ Գյումրիի զինկոմիսարիատ՝ չի ներկայացել եւ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հիմքերի բացակայության պայմաններում խուսափել է զինվորական ծառայության 2020 թվականի ամառային զորակոչից:

ԹՈՂԵԼ Է ՀԻՎԱՆԴԱՆՈՑՈՒՄ

«Ժողովուրդ» օրաթերթին մանրամասներ են հայտնի դարձել Վեդիի ծննդատանը մոր կողմից տղա երեխային լույս աշխարհ բերելու եւ նրանից հրաժարվելու դեպքից:

Մեզ հայտնի դարձավ, որ նորածնի ծնողները ամուսնալուծված են: Դեպքի մասին իմացել է երեխայի հայրը, որը ներկայացել է հիվանդանոց ու ասել, որ ինքը երեխայի հայրն ու իր երեխային կպահի: Ավելին՝ մեզ հասած լուրերի համաձայն՝ իրավապահները գտել են մորը ու տարել բաժին:

Shamshyan.com-ը գրել էր՝հոկտեմբերի 20-ին արտառոց դեպք է տեղի ունեցել Արարատի մարզում:

ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանության Արարատի մարզային վարչությունում եւ ոստիկանության Արարատի բաժնի անչափահասների գործերով բաժանմունքում օպերատիվ տեղեկություններ են ստացվել, որ այդ օրը Վեդիի ծննդատանը երեխա է ծնվել, ում մայրը, երեխային թողնելով հիվանդանոցում, հեռացել է՝ասելով, որ ինքը հրաժարվում է երեխայից:

Ք. ՄԱՆՈՒԿՅԱՆ

● *Ըստ ոստիկանության տվյալների՝հոկտեմբերի 20-ից 23-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտվել է հանցագործության 160 դեպք, որոնցից 4-ը՝նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ԹՄՐԱՆՅՈՒԹ՝ ԲԱՆԱԿՈՒՄ

Հովհաննես Նազոյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, հանդիսանալով Տավուշի մարզում տեղակայված ՊՆ սահմանապահ զորամասերից մեկի ականանետային դիվիզիոնի 3-րդ ականանետային մարտկոցի կառավարման դասակի հաշվարկող, կոչումով շարքային, 2022թ. մայիսի 14-ին՝ ժամը 12:00-ի սահմաններում, նույն զորամասի պահեստանոցում ապօրինի կերպով իրացրել է իր մոտ գտնվող կաննաբինոիդների խմբին պատկանող թմրանյութը, այն է՝ հյուրասիրել է նույն զորամասի զինծառայող, շարքային Ջիվան Մանուկյանին, ինչից հետո վերջինիս հետ նույն պահեստանցում խմբով ծխելու եղանակով միասին ապօրինի գործածել են թմրանյութը: Հ. Նազոյանին մեղադրանք է առաջադրվել՝ՀՀ քրեական օրենսգրքի 266 հոդվածի 1-ին մասով եւ 364.2 հոդվածի 2-րդ մասով, իսկ Ջ. Մանուկյանին՝ 364.2 հոդվածի 2-րդ մասով: Տավուշի մարզի առաջին ատյանի դատարանում սույն քրեական գործով մեղադրանքը պաշտպանում է Լոռու կայազորի զինվորական դատախազությունը: Հ. Նազոյանի նկատմամբ խափանման միջոց է ընտրվել զինվորական հսկողությունը, իսկ Ջ. Մանուկյանի նկատմամբ՝ բացակայելու արգելքը:

ՕԳՆՈՒԹՅՈՒՆ՝ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻՑ

Նոյեմբերյանի համայնքապետարանից հայտնում են, որ Ռուսաստանի Դաշնության Տուլա քաղաքի հայ համայնքի բարերարությամբ Արցախից բռնի տեղահանված եւ Նոյեմբերյան համայնքում վերաբնակեցված չորս եւ ավելի երեխաներ ունեցող 20 ընտանիքների տրվել է հարյուր հազարական դրամ օգնություն:

ԴԺԳՈՀ ԵՆ

Իջեւան համայնքի բնակիչները շարունակում են դժգոհել, որ Իջեւանի բժշկական կետրոնի շտապ օգնության ծառայությունը վատ է աշխատում. երբ իրենք զանգահարում են այդ ծառայություն, պատասխանում են, որ շտապ օգնության բրիգադը այլ կանչով մեկնել է, հարկ է սպասել: Իջեւանի ԲԿ-ն սպասարկում է 46 հազար մարդու: Ըստ կառավարության հաստատած չափորոշիչի՝ այդ ԲԿ-ում պետք է գործեր շտապ օգնության երկու բրիգադ: Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանին այդ առթիվ տեղեկատվական հարցում ենք ուղարկել: Մարզպետարանից ստացված պատասխանում նշված է. «Իջեւանի, Նոյեմբերյանի, Բերդի եւ Դիլիջանի «Իռ-Վիգ» բժշկական կենտրոններից յուրաքանչյուրում գործում է շտապ օգնության 1 բրիգադ: Հիվանդի՝ Երեւան տեղափոխումը իրականացվում է բժշկական կենտրոններում առկա ռեանիմոբիլներով: Բացի 4 բժշկական կենտրոններում գործող շտապ օգնության կայաններից, որոշ գյուղական բժշկական ամբուլատորիաների կամ առողջության կենտրոնների ենթակայության սանիտարական տրանսպորտով (որը կահավորված է անհրաժեշտ սարքավորումներով եւ դեղորայքով) իրականացվում է նաեւ «Ընտանեկան բժշկի կանչ աշխատանքից դուրս» ծրագիրը: Տեղեկացնեմ նաեւ, որ մարզի բժշկական կենտրոնների կազմում գործող 4 շտապ օգնության ծառայությունները գործում են 50 տոկոս ծանրաբեռնվածությամբ»:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ՊԱՇՏՈՆՅԱՆԵՐ

ՈՎ ՈՐՔԱՆ ԱՇԽԱՏԱՎԱՐՁ Է ՍՏԱՆՈՒՄ

Պարբերաբար անդրադառնալով պաշտոնատար անձանց տարեկան հայտարարագրերին՝ այս անգամ ներկայացնում ենք միայն նախարարների առաջին տեղակալների տարեկան աշխատանքի վարձատրությունները եւ եկամուտները:

Այսպիսով, աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարար Նարեկ Մկրտչյանի առաջին տեղակալ Աննա Ժամակոչյանի աշխատանքի վարձատրությունը տարեկան կազմում է 14 մլն 498 հազար դրամ, իսկ տարեկան եկամուտները կազմել են 14 մլն 567 հազար դրամ:

Արդարադատության նախարար Գրիգոր Մինասյանի առաջին տեղակալ Լեւոն Բալյանի աշխատանքի վարձատրությունը կազմել է 11 մլն 087 հազար դրամ, իսկ տարեկան եկամուտը՝ 13 մլն 194 հազար դրամ:

ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարար Ռոբերտ Խաչատրյանի առաջին տեղակալ Գեւորգ Մանթաշյանի տարեկան եկամուտը եւ տարեկան աշխատանքի վարձատրությունը կազմել է 10 մլն 577 հազար դրամ:

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար Ժաննա Անդրեասյանի առաջին տեղակալ Արաքսիա Սվաջյանի հայտարարագրում բացակայում են եւ՛ տարեկան եկամուտների մասին, եւ՛ աշխատանքի վարձատրության մասին տվյալները:

Շրջակա միջավայրի նախարար Հակոբ Սիմիդյանի առաջին տեղակալ Գայանե Գաբրիելյանի աշխատանքի վարձատրությունը տարեկան կազմել է 13 մլն 340 հազար դրամ, իսկ տարեկան եկամուտը կազմել է 13 մլն 528 հազար դրամ:

ՀՀ տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարար Գնել Սանոսյանի առաջին տեղակալ Հակոբ Վարդանյանի աշխատանքի տարեկան վարձատրությունը կազմել է 14 մլն 860 հազար դրամ, իսկ տարեկան եկամուտը կազմել է 18 մլն 560 հազար դրամ, որից 631 հազար դրամը վարկ է:

Առողջապահության նախարար Անահիտ Ավանեսյանի առաջին տեղակալ Լենա Նանուշյանի աշխատանքի տարեկան վարձատրությունը կազմել է 17 մլն 127 հազար դրամ, իսկ տարեկան եկամուտը կազմել է 55 մլն 996 հազար դրամ, որից 35 մլն դրամը վարկ է:

Արտաքին գործերի նախարար Արարատ Միրզոյանի առաջին տեղակալ Վահե Գեւորգյանի աշխատանքի տարեկան վարձատրությունը կազմել է 14 մլն 755 հազար դրամ, որը նրա միակ տարեկան եկամուտն է:

Էկոնոմիկայի նախարար Վահան Քերոբյանի առաջին տեղակալ Արման Խոջոյանի աշխատանքի տարեկան վարձատրությունը կազմել է 15 մլն 024 հազար դրամ, իսկ նրա տարեկան եկամուտները կազմել են 17 մլն 224 հազար դրամ:

Ներքին գործերի նախարար Վահե Ղազարյանի առաջին տեղակալ Դավիթ Համբարյանի աշխատանքի տարեկան վարձատրությունը կազմել է 8 մլն 496 հազար դրամ, իսկ նրա տարեկան եկամուտները՝ 12 մլն 587 հազար դրամ:

ՀՀ պաշտպանության նախարար Սուրեն Պապիկյանի առաջին տեղակալ Էդվարդ Ասրյանի աշխատանքի տարեկան վարձատրությունը կազմել է 11 մլն 589 հազար դրամ, որն էլ եղել է տարեկան եկամուտը:

ՀՀ ֆինանսների նախարար Վահե Հովհաննիսյանի առաջին տեղակալ Արման Պողոսյանի աշխատանքի տարեկան վարձատրությունը կազմել է 15 մլն 303 հազար դրամ, իսկ նրա տարեկան եկամուտները կազմել են 27 մլն 594 հազար դրամ, որից 1 մլն 372 հազար դրամը վարկ է:

Այսպիսով, կարող ենք արձանագրել, որ նախարարների առաջին տեղակալների աշխատավարձերի տարբերությունները շատ չեն, սակայն կարող ենք արձանագրել նաեւ, որ նրանք քիչ աշխատանքի վարձատրություն չեն ստանում:

Այսպիսով, թոփ 3 բարձր աշխատավարձ ստացող փոխնախարարներից առաջին տեղում է ՀՀ առողջապահության նախարարի առաջին տեղակալ Լենա Նանուշյանը, որի տարեկան աշխատանքի վարձատրությունը 17 մլն 127 հազար դրամ է:

Առողջապահության փոխնախարարից հետո 2-րդ տեղում ՀՀ ֆինանսների փոխնախարար Արման Պողոսյանն է՝ 15 մլն 303 հազար դրամ աշխատանքի վարձատրությամբ: Պողոսյանին անմիջապես հաջորդում է եւ 3-րդ տեղը զբաղեցնում է ՀՀ էկոնոմիկայի փոխնախարար Արման Խոջոյանը՝ 15 մլն 024 հազար դրամ աշխատանքի վարձատրությամբ:

Իշխանություններն ամեն ինչ անում են, ամեն գնով փորձում են իրենց սրտի պաշտոնյաների աշխատավարձը բարձրացնել, այդ թվում՝ չեն մոռանում դատական համակարգում աշխատող իրենց «սրտի դատավորների» վարձատրության մասին:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ԱՆՑՈՒԴԱՐՁ

ՏԵՂԱՎՈՐՎԵԼ ԵՆ ԿՐԹՕՋԱԽՆԵՐՈՒՄ

Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված 16 հազար 363 երեխա արդեն հաճախում է Հայաստանի տարբեր կրթական հաստատություններ:

«Ժողովուրդ» օրաթերթի փոխանցմամբ՝ այս մասին Հումանիտար կենտրոնում կայացած ասուլիսի ընթացքում հայտնել է ՀՀ վարչապետի մամուլի քարտուղար Նազելի Բաղդասարյանը՝ ըստ մարզերի ներկայացնելով կրթօջախներում ընդգրկված, ԼՂ-ից բռնի տեղահանված երեխաների թվերը:

«Երեւանի դպրոցներ է հաճախում 4860 երեխա, Կոտայքի մարզի՝ 2895, Արարատի՝2083, Արմավիրի՝2122, Լոռու՝916, Գեղարքունիքի՝742, Արագածոտնի՝729, Շիրակի՝ 631, Սյունիքի՝ 581, Տավուշի՝ 478, Վայոց ձորի՝ 321»,- նշել է Բաղդասարյանը՝ հավելելով, որ ԼՂ-ից բռնի տեղահանված երեխաներին կրթօջախներում ընդգրկելու գործընթացը շարունակական բնույթ է կրում:

ԻՆՉՈ՞Ւ ՉՎԵՐԹՆԵՐ ՉԿԱՆ

Համացանցում լուրեր են տարածվում, թե ապրիլի 1-ից դադարում են Երեւան-Մոսկվա-Երեւան չվերթները: Հայաստանի Հանրապետության՝ օդանավ շահագործող ավիաընկերությունները 9-ն են, որից «Սքայբոլ» ՍՊԸ-ն ավիափոխադրումներ չի իրականացնում, սակայն օդ բարձրացող օդապարիկը եւս համարվում է օդանավ: Միջերկրական ավիափոխադրումներ չի իրականացնում նաեւ «Արմենիան Հելիքոփթերս» ՍՊԸ-ն, «Նովէյր» ՍՊԸ-ն, կոմերցիոն ավիափոխադրումներ իրականացնող ընկերություններից ««ԱՐՄԵՆԻԱ» էյրվեյզ» ավիաընկերություն» ՓԲԸ-ն:

Որոնումների արդյունքում պարզ դարձավ, որ գրեթե ոչ մի հայկական ավիաընկերություն ապրիլի 1-ից հետո դեպի Մոսկվա պլանավորած թռիչք չունի:

«Ժողովուրդ» օրաթերթը կապ հաստատեց Քաղավիացիայի կոմիտեի հետ, որտեղից մեզ պատասխանեցին, որ դա նորմալ է, որ հաջորդ տարվա ապրիլի համար պլանավորված թռիչքներ չկա: Հավելեցին նաեւ, որ յուրաքանչյուր ավիաընկերություն ինքն է որոշում, որ ուղղությամբ իրականացնի չվերթները, եւ տեղյակ չեն այս լուրերի մասին:

Մենք կապվեցինք նաեւ Fly Arna ավիաընկերության հետ. մամուլի խոսնակ Գայանե Անտոնյանը մեզ պատասխանեց, որ այդ տեղեկությունը իրականությանը չի համապատասխանում: Քաղավիացիայի կոմիտեն եւ Fly Arna ավիաընկերությունը հերքում են այս լուրերը, սակայն փաստն այն է, որ ապրիլի մեկից ոչ մի թռիչք չկա:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

● *Անցած 3 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 58 ճՏՊ. 1 մարդ զոհվել է, 76-ը՝ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ԼԱՐՍ

ՀԵՐԹԵՐ ԳՐԵԹԵ ՉԿԱՆ

Վերին Լարսի անցակետում՝ դեպի Ռուսաստան գնացող ուղղությամբ, հայկական բեռնատարների հերթեր գրեթե չկան, Ռուսաստանից դուրս եկող ուղղությամբ որոշակի հերթեր առաջանում են: «Ժողովուրդ» օրաթերթի փոխանցմամբ՝ ԱԺ տարածաշրջանային եւ եվրասիական ինտեգրման հարցերի հանձնաժողովի նիստում այս մասին ասաց Պետական եկամուտների կոմիտեի նախագահի տեղակալ Աշոտ Մուրադյանը:

Մուրադյանը վստահեցրեց, որ ՊԵԿ-ն ամենօրյա ռեժիմով, նույնիսկ օրական մի քանի անգամ իր հսկողության ներքո է պահում Վերին Լարսում իրավիճակը՝ գիտակցելով դրա կարեւորությունը: Ըստ նրա՝ վերջին 1 ամսվա ընթացքում 2 անգամ է եղել, որ, եղանակային պայմաններով պայմանավորված, բեռնատար մեքենաների համար որոշակիորեն սահմանափակվել է Վերին Լարսի անցակետով անցման հնարավորությունը, ինչը, սակայն, տեւել է ժամեր:

«Հայաստանից դեպի Ռուսաստան գնացող մեքենաների համար հերթերը գրեթե բացակայում են: Մեր մոնիթորինգի արդյունքները ցույց են տալիս, որ Հայաստանից դուրս գալուց հետո 1-2, մաքսիմում 3 օրվա ընթացքում անցնում են անցակետը»,- ասաց ՊԵԿ նախագահի տեղակալը:

Մուրադյանը հիշեցրեց, որ դեռ նախորդ տարի Ռուսաստանի գործընկերներն անցակետից մի քանի կմ հեռավորության վրա առանձին տարածք էին նախատեսել, որտեղ ԵԱՏՄ ապրանքների, այս դեպքում՝ Հայաստանից գնացող ապրանքների ու տրանսպորտային միջոցների նկատմամբ իրականացնում էին առանձնացված մաքսային հսկողություն: «Դա նպաստում էր մեր մեքենաների եւ ապրանքների նկատմամբ ավելի արագ, արտոնյալ մաքսազերծման գործընթացին: Վերջին տարվա ընթացքում այդ տարածքում տեղադրվել է 2-3 մաքսազերծման սարք, որ էլ ավելի արագ իրականացվի»,- նշեց Մուրադյանը:

Ինչ վերաբերում է Ռուսաստանից դեպի Վրաստան, Հայաստան եկող բեռներին, ապա ՊԵԿ նախագահի տեղակալն ասաց. «Որոշակի հերթեր առաջանում են տրանսպորտային միջոցների մեծ քանակի պատճառով: Երկու հանգամանք են ազդում դրա վրա՝ մեկը վրացական կողմում իրականացվող շինարարական աշխատանքներն են (Մենք մեր վրացի գործընկերների հետ ակտիվ աշխատում ենք, եւ իրենք, կախված ծանրաբեռնվածությունից, կարող են ուղղությունները փոխել՝ երեք ուղի դուրս, մեկ ուղի ներս կամ հակառակը: Այնուամենայնիվ, որոշակի փոքր հերթեր առաջանում են), մյուս հանգամանքն այն է, որ Ռուսաստանի Դաշնությունում ընդունվել են արտահանման որոշակի սահմանափակումներ: Մաքսային օրենսգիրքն ասում է՝ եթե կան արտահանման որոշակի սահմանափակումներ, դրանց նկատմամբ հսկողությունը պետք է իրականացվի այն արտահանողի մաքսային կետում, որտեղից արտահանվում է: Սա եւս երբեմն առաջացնում է նման հարցեր»:

Մուրադյանը հավաստիացրեց, որ Ռուսաստանի գործընկերների հետ եւս ակտիվ աշխատել են, հարկ վճարողներին էլ դրա մասին տեղեկացրել են, որ խոչընդոտներ չառաջանան:

ԱՐՑԱԽԱՀԱՅՈՒԹՅՈՒՆ

Ո՞Ւ՞Ր Է ԱՆՀԵՏԱՑԵԼ 69 ՄԼՐԴ ԴՐԱՄԸ

Մի քանի օր առաջ Արցախի նախագահին կից հակաճգնաժամային խորհրդի նախագահ Տիգրան Պետրոսյանը հրապարակել էր Արցախի ներդրումային հիմնադրամից փոխառություն ստացած 30 իրավաբանական անձանց տվյալները, որոնք ընդհանուր առմամբ հիմնադրամին պարտք են ավելի քան 69 միլիարդ դրամ գումար: Ընդհանրապես Արցախի ներդրումային հիմնադրամի հետ կապված շատ մութ պատմություններ կան, որոնք երկար ժամանակ հանդիսացել են արցախցիների բնաբնակության ու բնակարկման առարկան: Այդ թեման առավել արդիական է դարձել հատկապես հիմա, քանի որ տեղահանության հետեւանքով ՀՀ-ում հայտնված արցախցիներն անընդհատ ստեղծված իրավիճակի համար մեղավորներ են փնտրում, իսկ մեղավորների շարքում նաեւ պետական միջոցները ժամանակին անվերադարձ օգտագործած անձինք ու պատասխանատուներն են դիտարկվում:

«Ժողովուրդ» օրաթերթը ուսումնասիրել է Տիգրան Պետրոսյանի կողմից հրապարակված ցանկում ներառված կազմակերպությունները, պարզել է, որ դրանցից յուրաքանչյուրը կապված է հայաստանյան կամ արցախյան այս կամ այն պաշտոնյայի հետ: Օրինակ՝ «Էր Փաուեր» ՍՊ ընկերությունը ներկայացնում է «Մաղավուզի» քարածխի հանքը, որը հանդիսանում էր ՀՀ պաշտոնաթող նախագահ Սերժ Սարգսյանի փեսայի հետ կապված «Էներգիա պլյուս» կազմակերպության իրավահաջորդը, եւ որը մինչ 2020թ. 44-օրյա պատերազմը օտարվել էր Արցախի ներդրումային հիմնադրամին:

«Գոլդ Սթար» ՓԲ ընկերությունը պատկանում էր շվեյցարահայ Վարդան Սերմաքեշին: Ընկերությունը զբաղվում էր ոսկու հումքի արտահանմամբ. հանքավայրը ներկայումս Ադրբեջանի տիրապետության տակ է:

«Դոմինիկ Սիստեմ» ՍՊ ընկերությունը կապվում է Արցախի ազգային անվտանգության ծառայության տնօրենի նախկին տեղակալ Գագիկ Սարգսյանի հետ, որն Արցախում զբաղվում էր շինարարությամբ:

«Պետրոլ Սերվիս» եւ «Էվե Քոնսթրաքշն» կազմակերպությունները պատկանում են Արցախի պաշտպանության բանակի նախկին հրամանատար Սամվել Բաբայանի մտերիմ Էդուարդ Վերդյանի ընտանիքին: Ցուցակում կան կազմակերպություններ, որոնք կապված են Արցախի նախկին նախագահ Բակո Սահակյանի, Արայիկ Հարությունյանի մտերիմ շրջանակի հետ, շոշափվում է Արցախում երկար տարիներ տարբեր պաշտոններ զբաղեցրած Կոմիտաս Կարապետյանի անունը:

«Ժողովուրդ» օրաթերթը փորձեց պարզել, թե հիշյալ պարտավորությունները բռնագանձելու համար ընդհանրապես հիմնադրամի կողմից միջոցներ ձեռնարկվել են, թե ոչ: Պարզվեց, որ թեեւ դրանք ժամկետանց պարտավորություններ էին վաղուցվանից, սակայն դատական կարգով բռնագանձման գործընթաց նախաձեռնվել էր 2023թ. հուլիս ամսից՝ Արցախի նախկին պետական նախարար Գուրգեն Ներսիսյանի նախաձեռնությամբ: Ի դեպ, Արցախի կառավարության մեր աղբյուրները հայտնեցին, որ Գուրգեն Ներսիսյանին պետական նախարարի պաշտոնից ազատելու հիմնական պատճառը պայմանավորված էր հենց այդ գործընթացով: Պարզվել է նաեւ, որ հիմնադրամի կողմից դատարան ներկայացված հայցերը պետական տուրք չվճարելու պատճառով Արցախի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի որոշումներով վարույթ չէին ընդունվել, սակայն Գուրգեն Ներսիսյանի պահանջով դրանք բողոքարկվել են վերաքննության կարգով, առաջին ատյանի դատարանի ակտերը՝ բեկանվել, եւ հայցերը ընդունվել էին վարույթ, սակայն դրանից հետո որեւէ տեղեկություն չկա, թե դատարանը ինչ է արել այդ հայցերի հետ: Լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար մենք փորձեցինք կապ հաստատել Արցախի ներդրումային հիմնադրամի տնօրենի եւ առաջին ատյանի դատարանի նախագահի հետ, սակայն ապարդյուն:

Ս.Գ.

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«ՄԻԳ ՏՐԱՆՍ» ՍՊԸ ԼՈՒԾԱՐՄԱՆ ՎԱՐՈՒՅԹ ՍԿՍԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայտատու՝ Սնանկության գործով կառավարիչ Պետրոս Բելույան:

«Սնանկության մասին» ՀՀ օրենքի 70-րդ հոդված:

ՀՀ սնանկության դատարանի՝ թիվ ՍՆԴ/3396/04/22 սնանկության գործով 02.10.2023 թվականին կայացվել է որոշում «ՄԻԳ ՏՐԱՆՍ» ՍՊԸ (ՀՀ, Գեղարքունիքի մարզ, գ. Ծովակ 1-ն նրբ. տ. 1, պետական գրանցման համար՝ 58.110.1157486, գրանցման ամսաթիվ՝ 11.01.2021թ, ՀՎՀՀ՝ 08424008) լուծարման վարույթ սկսելու եւ գործունեությունը կասեցնելու մասին:

Հասցե՝ ք. Հրազդան, Կենտրոն թաղ., Սահմանադրության հրապարակ 29/1

Հեռ.՝ +374 94 899948:

Էլ. փոստ՝ Petrosbeluyan@gmail.com:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ռաֆիկ Ծերունի Հակոբյանը կորցրել է իր՝ ՍՊՏՈՒ ուսումնարանի ավտոէլեկտրիկների N190521 դիպլոմը, որով նրան շնորհվել է 3-րդ կարգի ավտոէլեկտրիկի որակավորում:

Գ

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

«Բիէսթի» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կազմակերպիչ) «ԵՐԵՎԱՆԻ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ԲՈՐՍԱ» ՍՊԸ -ի հարթակում իրականացնելու է բաց աճուրդ համապատասխան փուլերով՝ «դասական» (գնի բարձրացմամբ), այնուհետեւ «հոլանդական» (գնի նվազեցմամբ) եղանակներով: Աճուրդի ընթացքում վաճառվելու է «Հայինկասացիա» ՓԲԸ-ին սեփականության իրավունքով պատկանող հետեւյալ լոտը՝

- Սյունիքի մարզ, ք. Կապան, Մ. Ստեփանյան փողոց, թիվ 3/1 հասցեում գտնվող 79,1 ք.մ. ավտոտնակներ եւ 0,013 հա հողամաս (հողամասի կադաստրային արժեքը վճարված չէ): Լոտի մեկնարկային գինը՝ 3400000 ՀՀ դրամ:

Աճուրդի փուլերը՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցեում 09.11.2023թ.-ին եւ 10.11.2023թ.-ին, ժ.12:00-ին դասական եղանակով, այնուհետեւ յուրաքանչյուր աշխատանքային օր, նույն վայրում, նույն ժամին՝ հոլանդական եղանակով: Աճուրդի ավարտը՝ 01.07.2024թ.: Աճուրդի մասնակցության նախավճարը սահմանված է համապատասխան գույքի ընթացիկ մեկնարկային գնի 1%-ի չափով, որի վճարման վերջնաժամկետը սահմանված է յուրաքանչյուր աճուրդի փուլի օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 16:00-ն: Նախավճարը վճարվում է «Բի Էս Թի» ՍՊԸ -ի դրամարկղում՝ աճուրդի կայացման հասցեում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կանխիկի շեմը չգերազանցելու դեպքում, կամ բանկային հաշվին («Արդշինբանկ» ՓԲԸ-ում 2470103374150000 հաշվեհամարին կամ կազմակերպչի կողմից տրված այլ հաշվեհամարին): Աճուրդին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել՝ ֆիզիկական անձանց համար անձը հաստատող փաստաթուղթ եւ Կազմակերպչի կողմից տրված մասնակցի վկայական (այսուհետ՝ աճուրդի վկայական), որը հաստատելու է նաեւ նախավճարի մուծման փաստը, իսկ իրավաբանական անձանց համար՝ կանոնադրությունը, իրավաբանական անձանց պետական գրանցման վկայականը, պաշտոնատար անձի կամ ներկայացուցչի լիազորությունները հաստատող փաստաթուղթ եւ աճուրդի վկայական:

Աճուրդում հաղթող է ճանաչվում այն անձը, ով առաջարկել է ամենաբարձր գինը: Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը, աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածից հետո, համարվում է աճուրդում հաղթած մասնակից: Աճուրդին մասնակցած, սակայն չհաղթած անձի մուծած նախավճարը վերադարձվում է աճուրդն ավարտվելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում: Նախավճարը ենթակա է վերադարձման, եթե աճուրդը համարվում է չկայացած: Եթե աճուրդում հաղթող ճանաչված անձը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը կամ առուվաճառքի պայմանագիրը, ապա նա կորցնում է իր մուծած նախավճարը: Եթե Կազմակերպիչը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը, ապա նա պարտավոր է աճուրդում հաղթող ճանաչված անձին վերադարձնել նախավճարը:

Լոտն ուսումնասիրելու ցանկություն հայտնած անձինք կարող են սույն ծանուցման օրվան հաջորդող օրվանից մինչեւ աճուրդի ավարտի նախորդող օրը, յուրաքանչյուր աշխատանքային օր, ժ. 10:00-ից մինչեւ 18:00-ն, այցելել վերը նշված հասցեով եւ ծանոթանալ լոտի հետ՝ այցելությունը նախապես համաձայնեցնելով Կազմակերպչի եւ Բորսայի հետ: Հարկային գործակալ հանդիսանալու դեպքում աճուրդում հաղթած մասնակցի կողմից լոտի գնի վճարելու կարգը սահմանվում է վաճառողի հետ՝ փոխհամաձայնեցված ժամկետներում: Սույն ծանուցումը կարող է փոփոխվել մամուլում հրապարակվելու միջոցով: Աճուրդների անցկացման կանոնակարգին կարող եք ծանոթանալ եւ անվճար ստանալ կանոնակարգի պատճենը, դիմելով Կազմակերպչին եւ Բորսային՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցե: Բոլոր այլ տեղեկությունների համար կարող եք զանգահարել (011) 56-45-13 հեռախոսահամարով կամ այցելել www.llcbst.am, www.borsa.am կայքեր:

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ԿԱՐԾԻՔ

ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

ՐԱՖՖՈՒ «ԽԵՆԹԸ»՝ ԹԱՏՐՈՆՈՒՄ

Պատանի հանդիսատեսի թատրոնի բեմ կբարձրանա «Խենթը» ներկայացումը՝ ըստ Ռաֆֆու համանուն վեպի:

«Ժողովուրդ» օրաթերթի փոխանցմամբ՝ առաջնախաղը տեղի կունենա հոկտեմբերի 31-ին: Բեմադրության ռեժիսորը Դավիթ Հարությունյանն է, որի խոսքով՝ շուրջ վեց ամիս տեւած աշխատանքներից հետո ներկայացումը հանձնում են հանդիսատեսի դատին:

«Այն, ինչ ապրում է յուրաքանչյուր հայ, այն արհավիրքները, որոնց ականատեսն ենք լինում՝ էթնիկ զտումներ, պատերազմ... այն, ինչ տեսանք, լսեցինք եւ զգացինք, մեծ վերք եւ հետք են թողել բոլորիս վրա: Կարծում եմ՝ սա այդ հետքի արտացոլանքն է: Թվում է՝ ոչինչ չի փոխվել, պատմությունը կրկնվում է»,- նշում է Դավիթ Հարությունյանը:

Ռեժիսորն ընդգծում է, որ ներկայացման խնդիրը մարդկանց հուզելու մեջ չէ, այլ գոյի պահպանության մասին մտածելու, չցեղասպանվելու, ելքը գտնելու մեջ է: «Ռաֆֆին երեւի չգիտեր, որ մարգարե է: Դեպքերը կրկնվում են, եւ ամեն խնդրի սկզբնաղբյուրն ու պատճառները Ռաֆֆին ներկայացնում է «Խենթը» վեպում»,- ասում է ռեժիսորը:

Ըստ նրա՝ ժամանակակից սերունդը պետք է հնարավորություն ունենա դիտելու այս ներկայացումը: Ռեժիսորի խոսքով՝ «Խենթը» վեպում շատ պատգամներ, շատ իմաստներ, ամբարված մտքեր եւ թանկ խորհուրդներ կան, որոնք պահպանվել են ներկայացման մեջ:

Հարությունյանը վստահեցնում է՝ հանդիսատեսը կտեսնի հրաշալի կերպարներ, նոր դեմքերի, մարդկանց, որոնք նվիրված են եղել ներկայացման կայացմանը:

«Շնորհակալություն եմ հայտնում ստեղծագործական կազմին, որ իսկապես ջանք չի խնայել, որպեսզի ներկայացումը կայանա: Հատուկ շնորհակալություն եմ հայտնում պիեսի հեղինակին՝ Սուրեն Հարությունյանին, բեմադրող նկարիչ, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ Գարեգին Եվանգուլյանին, զգեստների նկարիչ Մարինա Թադեւոսյանին, կոմպոզիտոր Վահան Արծրունուն, խորեոգրաֆ Անահիտ Ենոքյանին»,- եզրափակում է ռեժիսորը:

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

«Բիէսթի» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կազմակերպիչ) «ԵՐԵՎԱՆԻ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ԲՈՐՍԱ» ՍՊԸ-ի հարթակում իրականացնելու է բաց աճուրդ համապատասխան փուլերով՝ «դասական» (գնի բարձրացմամբ), այնուհետեւ «հոլանդական» (գնի նվազեցմամբ) եղանակներով: Աճուրդի ընթացքում վաճառվելու են «Արդշինբանկ» ՓԲԸ-ին (այսուհետ՝բանկ) գրավի իրավունքով պատկանող հետեւյալ լոտերն ըստ ներկայացված հերթականության՝

- Սյունիքի մարզ, համայնք Կապան, Կապան ք., Զորք թաղամաս, 12 շենք, 36 հասցեում գտնվող 88,8 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 13560000 ՀՀ դրամ:
- Կոտայքի մարզ, համայնք Աբովյան ք., Սեւանի փողոց, 2/1 շենք, 72 հասցեում գտնվող 69,7 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 19500000 ՀՀ դրամ:
- Արարատի մարզ, համայնք Արտաշատ, Արտաշատ ք., Պատկանյան փողոց, 62/2 շենք, 36 հասցեում գտնվող 59,7 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 18900000 ՀՀ դրամ:
- ք. Երեւան, Նոր-Նորք, Մոլդովական փողոց, 44 շենք, 21 հասցեում գտնվող 64,05 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 31760000 ՀՀ դրամ:
- Արարատի մարզ, համայնք Մասիս ք., Նոր թաղամաս, 20 շենք, 43 հասցեում գտնվող 65,1 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 21200000 ՀՀ դրամ:
- Արարատի մարզ, համայնք Մասիս ք., Մասիս Կայարան, Գործարանային փողոց, 6/1 հասցեում գտնվող 59.5 ք.մ. խանութ եւ 0.004055 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 10950000 ՀՀ դրամ:
- Արարատի մարզ, համայնք Նոր Խարբերդ, 4-րդ փողոց, 27 հասցեում գտնվող 107,2 քմ բնակելի տուն, 4,7 քմ կաթսայատուն, 46,8 քմ կիսակառույց, 18,1 քմ ծածկ եւ 0,1364 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 31300000 ՀՀ դրամ:
- Կոտայքի մարզ, համայնք Չարենցավան, Չարենցավան ք., 9-րդ թաղամաս, 36 շենք, 18 հասցեում գտնվող 82,7 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 14300000 ՀՀ դրամ:
- Սյունիքի մարզ, համայնք Քաջարան, Քաջարան ք., Վ. Տերյան փողոց, 2 շենք, 13 հասցեում գտնվող 80,3 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 13820000 ՀՀ դրամ:
- Շիրակի մարզ, համայնք Գյումրի ք., Չկալովի փողոց, 6/4 հասցեում գտնվող 265,4 ք.մ. բնակելի տուն, 156,14 քմ բնակելի տուն, 3,61 քմ /6,49 խմ/ պարիսպ եւ 0,039595 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 55050000 ՀՀ դրամ:
- Սյունիքի մարզ, համայնք Գորիս, Գորիս ք., Սարյան փողոց, 17 շենք, 2 հասցեում գտնվող 37 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 10480000 ՀՀ դրամ:
- Արագածոտնի մարզ, համայնք Թալին ք., Մեխանիզատորների փողոց, 1-ին նրբանցք, թիվ 5 հասցեում գտնվող 201,38 ք.մ. բնակելի տուն, 32,38 քմ անասնաշենք, 31,74 քմ ավտոտնակ, 16,8 քմ օժանդակ շինություն եւ 0,0814 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 18740000 ՀՀ դրամ:
- Տավուշի մարզ, համայնք Իջեւան ք., Ղարագյոզյան փողոց, 48 շենք, 7 հասցեում գտնվող 61,6 ք.մ. բնակարան եւ 4,0 քմ ինքնակամ շինություն: Լոտի մեկնարկային գինը՝ 14900000 ՀՀ դրամ:
- Գեղարքունիքի մարզ, համայնք Մարտունի, Մարտունի ք., Թումանյան փողոց, 3 շենք, 38 հասցեում գտնվող 44,8 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 10900000 ՀՀ դրամ:
- ք. Երեւան, Նոր-Նորք, Դ. Մալյան փողոց, 11 շենք, 32 հասցեում գտնվող 43,9 քմ բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 23700000 ՀՀ դրամ:
- Լոռու մարզ, համայնք Սպիտակ ք., Քըրք Քըրքորյան փողոց, թիվ 190 հասցեում գտնվող 216,7 քմ բնակելի տուն եւ 0,1636 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 15700000 ՀՀ դրամ:
- Գեղարքունիքի մարզ, համայնք Սեւան ք., Գոմաձոր թաղամաս, Կոմիսարների փողոց, թիվ 46 հասցեում գտնվող 74,31 քմ բնակելի տուն, 5,37 քմ կաթսայատուն, 68,67 քմ խորդանոց-ավտոտնակ, 21,67 քմ անասնաշենք, 6,14 քմ աստիճաններ, 3,25 քմ /6,96 խմ/ պարիսպ եւ 0,10831 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 12800000 ՀՀ դրամ:
- Արարատի մարզ, համայնք Մասիս, գյուղ Նոր Խարբերդ, Վարդաթիլի փողոց, 4/1 հասցեում գտնվող 124,5 քմ բնակելի տուն, 18,4 քմ ծածկ, 6,5 քմ ծածկ, 0,9 քմ /1,98 խմ/ պարիսպ, 1,34 քմ /2,68 խմ/ պարիսպ, 3,1 քմ ծածկ եւ 0,04209 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 21800000 ՀՀ դրամ:
- Կոտայքի մարզ, համայնք Աբովյան ք., Սարալանջի փողոց, 22 շենք, 42 հասցեում գտնվող 75,65 քմ բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 23300000 ՀՀ դրամ:
- Արարատի մարզ, համայնք Մասիս ք., 6-րդ թաղամաս, 2-րդ փողոց, 41 հասցեում գտնվող 101,15 քմ բնակելի տուն, 15,7 քմ /31,4 խմ/ պարիսպ եւ 0,04038 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 27200000 ՀՀ դրամ:
- Արարատի մարզ, համայնք Մասիս, Մասիս ք., 6-րդ թաղամասի 2-րդ փողոց, 38/1 հասցեում գտնվող 197,4 քմ բնակելի տուն եւ 0,0409 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 33380000 ՀՀ դրամ:
- Շիրակի մարզ, համայնք Գյումրի ք., Ղարիբջանյան փողոց, 35 հասցեում գտնվող 212,45 քմ բնակելի տուն, 53,88 քմ ավտոտնակ եւ 0,0265 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 33960000 ՀՀ դրամ:
- ք. Երեւան, Նոր-Նորք, Ֆ. Նանսենի փողոց, 6 շենք, 126 հասցեում գտնվող 62 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 28860000 ՀՀ դրամ:
- Կոտայքի մարզ, համայնք Գողթ, 3-րդ փողոց, 1-ին նրբանցք, 2/1 հասցեում գտնվող 354,26 քմ բնակելի տուն, 68,75 քմ անասնաշենք, 5,15 քմ կաթսայատուն, 35,08 քմ թոնրատուն, ծածկ, 11,33 քմ հարթակ եւ 0,38747 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 52400000 ՀՀ դրամ:

Լոտերի նկատմամբ սահմանափակումները՝ գույքերը գրավադրված են:

Աճուրդի փուլերը՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցեում 09.11.2023թ.-ին, ժ. 12:00-ին դասական եղանակով, այնուհետեւ յուրաքանչյուր աշխատանքային օր, նույն վայրում, նույն ժամին՝ հոլանդական եղանակով: Աճուրդի ավարտը՝ 11.12.2023թ.-ին: Աճուրդի մասնակցության նախավճարը սահմանված է համապատասխան գույքի ընթացիկ մեկնարկային գնի 1%-ի չափով, որի վճարման վերջնաժամկետը սահմանված է յուրաքանչյուր աճուրդի փուլի օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 16:00-ն: Նախավճարը վճարվում է «Բի Էս Թի» ՍՊԸ-ի դրամարկղումաճուրդի կայացման հասցեում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կանխիկի շեմը չգերազանցելու դեպքում, կամ բանկային հաշվին («Արդշինբանկ» ՓԲԸ-ում 2470103374150000 հաշվեհամարին) կամ կազմակերպչի կողմից տրված այլ հաշվեհամարին: Աճուրդին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել՝ ֆիզիկական անձանց համար անձը հաստատող փաստաթուղթ եւ Կազմակերպչի կողմից տրված մասնակցի վկայական (այսուհետ՝ աճուրդի վկայական), որը հաստատելու է նաեւ նախավճարի մուծման փաստը, իսկ իրավաբանական անձանց համար՝ կանոնադրությունը, իրավաբանական անձանց պետական գրանցման վկայականը, պաշտոնատար անձի կամ ներկայացուցչի լիազորությունները հաստատող փաստաթուղթ եւ աճուրդի վկայական:

Աճուրդում հաղթող է ճանաչվում այն անձը, ով առաջարկել է ամենաբարձր գինը: Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը, աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածից հետո, համարվում է աճուրդում հաղթած մասնակից: Աճուրդին մասնակցած, սակայն չհաղթած անձի մուծած նախավճարը վերադարձվում է աճուրդն ավարտվելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում: Նախավճարը ենթակա է վերադարձման, եթե աճուրդը համարվում է չկայացած: Եթե աճուրդում հաղթող ճանաչված անձը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը կամ առուվաճառքի պայմանագիրը, ապա նա կորցնում է իր մուծած նախավճարը: Եթե Կազմակերպիչը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը, ապա նա պարտավոր է աճուրդում հաղթող ճանաչված անձին վերադարձնել նախավճարը:

Նախքան աճուրդի ավարտն աճուրդային լոտի նկատմամբ բանկի գրավի կամ սեփականության իրավունքի դադարման հետեւանքով աճուրդի մասնակիցների կորուստների եւ վնասների համար բանկը որեւէ պատասխանատվություն չի կրում:

Լոտերն ուսումնասիրելու ցանկություն հայտնած անձինք կարող են սույն ծանուցման օրվան հաջորդող օրվանից մինչեւ աճուրդի ավարտի նախորդող օրը, յուրաքանչյուր աշխատանքային օր, ժ. 10:00-ից մինչեւ 18:00-ն, այցելել վերը նշված հասցեներով եւ ծանոթանալ լոտերի հետ՝ այցելությունը նախապես համաձայնեցնելով Կազմակերպչի եւ Բորսայի հետ: Հարկային գործակալ հանդիսանալու դեպքում աճուրդում հաղթած մասնակցի կողմից լոտի գնի վճարելու կարգը սահմանվում է վաճառողի հետ՝ փոխհամաձայնեցված ժամկետներում: Սույն ծանուցումը կարող է փոփոխվել մամուլում հրապարակվելու միջոցով: Աճուրդների անցկացման կանոնակարգին կարող եք ծանոթանալ եւ անվճար ստանալ կանոնակարգի պատճենը, դիմելով Կազմակերպչին՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցե: Բոլոր այլ տեղեկությունների համար կարող եք զանգահարել (011) 56-45-13 հեռախոսահամարով կամ այցելել www.llcbst.am, www.borsa.am կայքերը:

ՍՊՈՐՏ

ՖՈՒՏԲՈԼԻՍՏԸ ՎԻՐԱՀԱՏՎԵՑ

Գերմանիայի չեմպիոն Մյունխենի «Բավարիայի» 28-ամյա գերմանացի կիսապաշտպան Լեոն Գորեցկան վիրահատվել է «Մայնցի» դեմ խաղում (3:1) ձեռքի կոտրվածք ստանալուց հետո. հաղորդում է ակումբի մամուլի ծառայությունը: Ընթացիկ մրցաշրջանում Գորեցկան «Բավարիայի» հետ բոլոր մրցաշարերում մասնակցել է 12 հանդիպման, խփել է 2 գոլ, կատարել 2 գոլային փոխանցում:

«ԻՆՏԵՐ»-Ը ՀԱՂԹԵՑ

Իտալիայի ֆուտբոլի առաջնության 9-րդ տուրում «Ինտեր»-ը հյուրընկալվեց «Տորինո»-ին:

«Ժողովուրդ» օրաթերթի հաղորդմամբ՝ միլանյան ակումբին հաջողվեց առավելության հասնել «Տորինո»-ի նկատմամբ խոշոր՝ 0:3 հաշվով: «Ինտեր»-ի կազմում աչքի ընկան Տուրամը, Մարտինես եւ Չախանօղլուն:

Հայաստանի ֆուտբոլի ազգային թիմի նախկին ավագ հեներիխ Մխիթարյանը «Ինտեր»-ի մեկնարկային կազմում էր եւ մասնակցեց ամբողջ խաղին:

ՍԿՍՈՒՄ Է ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՎԵԼ

ՈՒԵՖԱ 2023/24 Եվրոպայի կանանց մինչեւ 19 տարեկանների առաջնության ընտրական մրցաշարին նախապատրաստվող կանանց Հայաստանի հավաքականը հոկտեմբերի 21-30-ը մարզական հավաք կանցկացնի ՀՖՖ տեխնիկական կենտրոն/ֆուտբոլի ակադեմիայում. այս մասին հայտնում է ՀՖՖ-ն: Հավաքականի գլխավոր մարզիչ Գագիկ Տեր-Գեւորգյանը հավաքին մասնակցելու համար հրավիրել է հետեւյալ ֆուտբոլիստուհիներին.

Դարպասապահներ՝
Շողիկ Սարդարյան - «Ուրարտու»,
Ալեսիա Հաջաթյան - «Շիրակ»,
Սոֆի Հարությունյան - «Լեռնային Արցախ»:
Պաշտպաններ՝
Գայանե Գրիգորյան - «Լեռնային Արցախ»,
Նաիրա Կատիկյան - «Լեռնային Արցախ»,
Աննա Մարգարյան - «Արարատ-Արմենիա»,
Թամարա Սահակյան - «Շիրակ»,
Ռոզալինա Երիցյան - «Փյունիկ»,
Հասմիկ Գրիգորյան - «Ուրարտու»:
Կիսապաշտպաններ՝
Վալենտինա Գրիգորյան - «Լեռնային Արցախ»,
Էմմի Սարգսյան - «Ուրարտու»,
Լուսինե Կոստանյան - «Ուրարտու»,
Սվետլանա Ալեքսանյան - «Արարատ-Արմենիա»,
Լաուրա Հովհաննիսյան - «Շիրակ»,
Թահլիա Ոսկանյան - «Ռեյդերս» (Ավստրալիա):
Հարձակվողներ՝
Միլենա Սայադյան - «Ուրարտու»,
Նարինե Իսկանդարյան - «Արարատ-Արմենիա»,
Միլենա Ավետիսյան - «Շիրակ»,
Սուսաննա Վարդումյան - «Փյունիկ»:

Կանանց Հայաստանի Մ-19 հավաքականն իր առաջին հանդիպումը կանցկացնի հոկտեմբերի 24-ին՝ մրցելով Ուկրաինայի հավաքականի հետ: Հոկտեմբերի 27-ին կկայանա Հյուսիսային Մակեդոնիա - Հայաստան հանդիպումը, իսկ երրորդ տուրում հոկտեմբերի 30-ին մեր թիմը կմրցի Լյուքսեմբուրգի ընտրանու հետ:

● *Հոկտեմբերի 25-ին Հ. Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի պետական թատրոնում տեղի կունենա «Բանալի երկուսի համար» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝ 1000-3000 դրամ:*

ԵՂԵ՛Ք ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

Էջը՝ ՄԱՐԻԱՄ ՂԱԶԱՐՅԱՆԻ

ՎԱՐԿ

ՀԱՐՑ. Ես կատարել եմ վարկի մարում նախկին բանկում ինձ տրամադրված վարկային կոդով, բայց վարկս չի մարվել: Ինչպե՞ս պետք է լուծվի խնդիրը:

Աննա Ավդալյան (44 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Եթե Դուք կատարել եք վարկի մարման գործարք նախկին բանկում Ձեզ տրամադրված վարկային կոդով, փոխանցված գումարը չի ուղղվի Ձեր՝ արդեն «Արդշինբանկ»-ում սպասարկվող վարկի մարմանը: Անհրաժեշտ է կատարել «Արդշինբանկ»-ում վարկի մարում Ձեզ տրամադրված նոր վարկային կոդով ժամկետանց պարտավորություններ առաջացումից խուսափելու համար:

Ձեր՝ այլ բանկի վարկային կոդով փոխանցված գումարը կվերադարձվի Ձեզ՝ առանց լրացուցիչ դիմումի:

Եթե, այնուամենայնիվ, Ձեր վարկը ժամկետանցվել է այլ բանկի վարկային կոդով փոխանցում կատարելու հետեւանքով, Ձեր դիմումի հիման վրա՝ «Արդշինբանկ»-ը կկատարի ժամկետանց պարտավորության սրբագրում:

«Արդշինբանկ»

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Ձեր վարկի նոր վարկային կոդի մասին կարող եք տեղեկանալ՝

- բանկից ստացված sms-տեղեկացումից, Ձեր էլ. փոստին ստացված տեղեկատվական նամակից,
- զանգահարելով բանկի կոմունիկացիոն կենտրոն 012222222 հեռախոսահամարով,
- թողնելով հետզանգի պատվեր www.ardshinbank.am կայքում,
- այցելելով բանկի որեւէ մասնաճյուղ: Մասնաճյուղերի հասցեները եւ աշխատանքի ժամերը հասանելի են հետեւյալ հղումով՝ https://www.ardshinbank.am/branches-and-atms :

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑ. Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսական ո՞ր գոտիներում կարելի է մշակել ոլոռ:

Քրիստինա Բաբայան (56 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Ոլոռ կարելի է մշակել Սեւանի ավազանի, Կենտրոնական, Շիրակի, Լոռի-Փամբակի, Ապարան-Հրազդանի, հյուսիսարեւելյան եւ Ջանգեզուրի գոտիներում ինչպես սերմ, այնպես էլ կանաչ զանգված եւ ունդեր ստանալու համար: Ոլոռը ցրտադիմացկուն է, սերմերն սկսում են ծլել 1-20 ջերմության պայմաններում:

ՀՀ գյուղատնտեսության նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Ծիլերն ընդունակ են դիմանալու -8-120 սառնության պայմաններում: Ոլոռի ցանքի նորման է 1 հա-ին 1.0-1.1 մլ ծլունակ սերմ:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

Հայաստանի հեծանվասպորտի հավաքականը հոկտեմբերի 21-22-ը մասնակցել է Վրաստանի բաց առաջնությանը եւ 2 ոսկե, 2 արծաթե ու 1 բրոնզե մեդալ նվաճել:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ ______________

Ազգանուն՝ ______________

Առաքման հասցե՝ ______________

Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ ______________

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ



Շիրակ	+1 +4 / +10 +16
Կոտայքի լեռներ	+2 +5 / +10 +14
Կոտայքի նախալեռներ	+7 +9 / +16 +18
Գեղարքունիք	+1 +5 / +10 +14
Լոռի	+4 +7 / +16 +19
Տավուշ	+8 +10 / +19 +23
Արագածոտնի լեռներ	0 +4 / +10 +13
Արագածոտնի նախալեռներ	+7 +10 / +18 +21
Արարատ	+9 +11 / +21 +23
Արմավիր	+8 +11 / +20 +22
Վայոց ձորի լեռներ	+2 +3 / +10 +13
Վայոց ձորի նախալեռներ	+8 +11 / +21 +24
Սյունիքի հովիտներ	+10 +13 / +20 +22
Սյունիքի նախալեռներ	+4 +8 / +14 +18
ԼՂՀ	+9 +13 / +21 +24
Երեւան	+9 +12 / +20 +23

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **23.10.2023**
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Համբարձումյան 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*